

2012թ. խոշոր հարկ վճարողների մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների վերլուծություն

Սույն վերլուծությունը իրականացվում է այն 462 հարկ վճարողների ամփոփ ցուցանիշների հիման վրա, որոնք ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանով ընդգրկված են Խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության կողմից 2012թ.-ի ընթացքում սպասարկվող հարկ վճարողների ցանկում:

Խոշոր հարկ վճարողների մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների համեմատական վերլուծությունը իրականացվում է նույն 462 հարկ վճարողների 2011 և 2012 թվականների փաստացի տվյալների հիման վրա:

2012թ. երկրորդ եռամսյակի ամփոփ ցուցանիշների վերլուծության հիման վրա կարելի է փաստել, որ

1. Իրացումից հասույթը կազմել է 680.7 մլրդ դրամ կամ նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատությամբ աճել է 10.9%-ով:
2. Ներմուծման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճել են 9.2 %-ով և կազմել 249.4 մլրդ դրամ:
3. Արտահանման ծավալները կազմել են 100.3 մլրդ դրամ նախորդ տարվա նույն եռամսյակի 98.0 մլրդ դրամի փոխարեն կամ ավել 2.3 մլրդ դրամով:
4. Վճարված մաքսային վճարների ցուցանիշի առումով 2012թ.-ի երկրորդ եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 44.9 մլրդ. դրամ:
5. Պետական բյուջե վճարված հարկերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշի առումով 2012թ.-ի երկրորդ եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 73.4 մլրդ. դրամ: Ընդ որում, նշված կազմակերպությունների կողմից 2012թ.-ի երկրորդ եռամսյակում վճարվել է հանրապետությունում հավաքագրված հարկային եկամուտների 52.7%-ը:
6. Հարկային մարմնի կողմից կատարվել են 155 հարկային ստուգումներ, այդ թվում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության 65 ստուգումներ, որոնց արդյունքում առաջադրվել է բյուջե լրացուցիչ վճարման ենթակա գումարներ 4.2 մլրդ. դրամի չափով:
7. 01.07.2012թ.-ի դրությամբ խոշոր հարկ վճարողներն ունեցել են 90.1 մլրդ դրամ գերավճար, այդ թվում՝ ավելացված արժեքի հարկի գծով՝ 57.9 մլրդ դրամ, իսկ հարկային պարտավորություն՝ 25.9 մլրդ դրամ: Նշված

Ժամանակահատվածում պետական բյուջեից հարկ վճարողների գերավճարների գումարներից ավելացված արժեքի հարկի վերադարձի ձևակերպում է կատարվել 4.6 մլրդ դրամի չափով, իսկ գերավճարների գումարներից այլ հարկատեսակների գծով հաշվանցվել է 2.8 մլրդ դրամի չափով կամ 59.2%-ով ավել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

8. Աշխատողների միջին ցուցակային թիվը դիտարկվող ժամանակահատվածում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելացել է 4139 մարդով կամ 3.1%-ով, իսկ աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների աճը կազմել է 7.0%: